ԻՆՉՊԵՍ ՆԱԽԱՁԵՌՆԵԼ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

USAID ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ
csodepo ՀԿ զարգացման ծրագիր
ԵՎՐԱՍԻԱ ՀԱՍԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ ԿԵՆՏՐՈՆ
Այլընտրանքային Նախագծեր Խումբ

Նախագծի մասին

Օրենսդրական առաջարկներ ներկայացնել, մասնակցել խորհրդարանում մշակվող օրենքների նախագծերին, կազմել լիարժեք օրենսդրական նախագծեր և հետևել, որպեսզի դրանք հասնեն խորհրդարան և մտնեն ԱԺ օրակարգ. այս ամենը թվում է բարդ և հասանելի միայն խորհրդարանականներին ու կառավարությա՞նը:

Ամենևին: Մենք նախաձեռնել ենք **«Օրենսդրական այլընտրանք»** ծրագիրը, որպեսզի քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և անհատներին ներկայացնենք այն բոլոր՝ օրենքով սահմանված ձևերը, որով նրանք կարող են մասնակցել օրինաստեղծ աշխատանքին, աջակցել իրենց հետաքրքրող ոլորտների կատարելագործմանը, օգնել՝ ավելի լավը դարձնել օրենքները, որոնք գործում են բոլորիս համար:

Մեր կայքի (www.altprojects.am) «Օրենսդրական այլընտրանք» բաժնում կարող եք գտնել ծրագրի իրականացման ընթացքում պատրաստված ուսումնական, ճանաչողական նյութերը, հոլովակները, այլ տեղեկատվություն:

Կայքի մեկ այլ բաժնում՝ «Առաջարկների բանկ» հավելվածում, կարող եք ինքներդ գտնել այն հանձնաժողովը, որի ենթակայության տակ գտնվում է այս կամ այն՝ ձեզ հետաքրքրող ոլորտը, և ներկայացնել սեփական ծրագրային առաջարկը:

Ծրագրի ղեկավար՝ Էլինար Վարդանյան

«Այլընտրանքային նախագծեր խումբը» հասարակական կառույց է, որի անդամները մշակում և ներկայացնում են հանրային կյանքի առավել ցավոտ ու կարևոր խնդիրների շուրջ սեփական, այլընտրանքային լուծումները:

Սույն ծրագրի իրականացումը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով, «ՀԿ Դեպո - Հասարակական կազմակերպությունների զարգացման ծրագրի» շրջանակում: Ծրագրի շրջանակներում ստեղծված նյութերի բովանդակությունը կամ արտահայտված տեսակետները միմիայն Այլընտրանքային նախագծեր խումբ հասարակական կազմակերպության և Եվրասիա համագործակցություն հիմնադրամինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԻՆՉՊԵՍ ՆԱԽԱՁԵՌՆԵԼ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիական նախաձեռնության միջոցով

Ինչ փոխվեց Սահմանադրական հանրաքվեի արդյունքում

2015թ. կայացած՝ Սահմանադրական հանրաքվեի արդյունքում ՀՀ հիմնական օրենքը կրեց մի շարք լուրջ փոփոխություններ: Առավել խոշորների մասին բոլորը, թերևս տեղյակ են՝ անցում կատարվեց կառավարման խորհրդարանական ձևին, ընդլայնվեցին վարչապետի լիազորությունները, համապատասխանաբար՝ պակասեցին նախագահի իրավասությունները: Նաև՝ սակավացան քաղաքացիների կողմից կատարվող ուղիղ ընտրության հնարավորությունները, քանի որ այսուհետ խորհրդարանի անդամներն են՝ ըստ քաղաքական մեծամասնության որոշման կամ կոալիցիոն պայմանավորվածությունների, ընտրում վարչապետին և նախագահին, հաստատում կառավարության կազմը:

Այնուամենայնիվ, Սահմանադրության նոր տարբերակում հայտնվել է **նոր դրույթ**, որը մինչ այս քչերի ուշադրությունն է գրավել: Այսուհետ հնարավոր է դարձել ՀՀ Սահմանադրության մեջ փոփոխություններ նախաձեռնել՝ շրջանցելով ԱԺ և Կառավարությունը, միայն քաղաքացիական նախաձեռնության միջոցով:

Իհարկե, այդ նախաձեռնությունը ամենևին հեշտերից չէ, պահանջում է մեծագույն կոնսոլիդացիա, կազմակերպչական հսկայական աշխատանք և ռեսուրսներ: Այնուամենայնիվ, այն նախատեսված է, ինչպես և նախատեսված է այն ողջ մանրամասն ընթացակարգը, որով պետք է շարժվի նման փոփոխություններ նախաձեռնող խումբը:

Այս ուղեցույցում կներկայացնենք բոլոր քայլերը, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ:

Ո՞ր օրենքով են սահմանվում Սահմանադրական փոփոխությունների անցկացման հնարավորությունները

ՀՀ Սահմանադրության 15-րդ գլուխը հստակեցնում է.

- Սահմանադրության ընդունման ու փոփոխության սահմանադրական հիմքերը,
- հանրաքվեի դրվող հարցերի շրջանակը,
- առավել ճկուն է դարձնում սահմանադրական փոփոխությունների գործընթացը՝ դրանում բարձրացնելով խորհրդարանի դերը, նախատեսում է քաղաքացիական նախաձեռնությամբ հանրաքվեների անցկացում,
- սահմանում է վերպետական միջազգային կազմակերպություններին միանալու վերաբերյալ հարցերով հանրաքվե անցկացնելու պահանջ:

Ինչպե՞ս է հնարավոր ընդունել նոր Սահմանադրություն

Նոր Սահմանադրության ընդունումը հնարավոր է միայն հանրաքվեի միջոցով:

Ինչպե՞ս է հնարավոր փոփոխություններ կատարել գործող Սահմանադրության մեջ

Գործող Սահմանադրության մեջ **որոշ** փոփոխություններ անել հնարավոր է երբեմն նույնիսկ առանց հանրաքվեի անցկացման: Սակայն կան հոդվածներ, որոնք հնարավոր է փոփոխել միայն հանրաքվեի միջոցով:

ՕՐԻՆԱԿ՝

Սահմանադրական կարգի հիմունքների, մարդու իրավունքների և առանցքային նշանակություն ունեցող այլ դրույթների փոփոխությունը, ըստ Սահմանադրության 202-րդ հոդվածի 1-ին մասի, կարող է կատարվել բացառապես հանրաքվեի միջոցով:

Բացառապես հանրաքվեի միջոցով կարող են փոփոխվել.

- Սահմանադրական կարգի հիմունքները[1],
- Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները[2],
- Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքները և պետության քաղաքականության հիմնական նպատակները[3],
- Դատարանները և բարձրագույն դատական խորհուրդը[4],
- Մարդու իրավունքների պաշտպանը[5],
- Սահմանադրության ընդունումը, փոփոխությունը և հանրաքվեն[6],
- Ազգային ժողովի կարգավիճակը և գործառույթները[7],
- «Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով:» դրույթը[8],

---

1 Սահմնադրության 1-ին գլուխ

2 Սահմանադրության 2-րդ գլուխ

3 Սահմանադրության 3-րդ գլուխ

4 Սահմանադրության 7-րդ գլուխ

5 Սահմանադրության 9-րդ գլուխ

6 Սահմանադրության 15-րդ գլուխ

7 Սահմանադրության 88-րդ հոդված

8 Սահմանադրության 89-րդ հոդված, 3-րդ մաս 1-ին նախադասություն

- «Ազգային ժողովն ընտրվում է հինգ տարի ժամկետով:» դրույթը[9],
- «Ազգային ժողովի կանոնակարգը, Ընտրական օրենսգիրքը, Դատական օրենսգիրքը, Սահմանադրական դատարանի մասին օրենքը, Հանրաքվեի մասին օրենքը, Կուսակցությունների մասին օրենքը և Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքը սահմանադրական օրենքներն են և ընդունվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն 3/5-ով: Սահմանադրական օրենքի իրավակարգավորումը չպետք է դուրս գա իր առարկայի շրջանակներից:» դրույթը[10],
- Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովները[11],
- Վարչապետին անվստահություն հայտնելը[12],
- Ռազմական դրությունը[13],
- Արտակարգ դրությունը[14],
- Հանրապետության նախագահի կարգավիճակը և գործառույթները[15],
- Հանրապետության նախագահի լիազորությունների ժամկետը և նրան ներկայացվող պահանջները[16],
- Հանրապետության նախագահի ընտրության կարգը[17],

---

9 Սահմնադրության 90-րդ հոդված 1-ին մաս

10 Սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ մաս

11 Սահմանադրության 108-րդ հոդված

12 Սահմանադրության 115-րդ հոդված

13 Սահմանադրության 119-րդ հոդված

14 Սահմանադրության 120-րդ հոդված

15 Սահմանադրության 123-րդ հոդված

16 Սահմանադրության 124-րդ հոդված

17 Սահմանադրության 125-րդ հոդված

- Կառավարության կարգավիճակը և գործառույթները[18],
- Վարչապետի ընտրությունը և նշանակումը[19],
- Զինված ուժերը[20],
- «Կենտրոնական բանկը թողարկում է Հայաստանի Հանրապետության արժույթը՝ հայկական դրամը:»[21] դրույթը:

Ո՞ր փոփոխություններն են, որ Սահմանադրության մեջ հնարավոր է անել առանց հանրաքվեի

Սահմանադրության **մյուս բոլոր** հոդվածներում փոփոխությունները կարող են ընդունվել Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով:

Ովքե՞ր ունեն Սահմանադրության մեջ *առանց հանրաքվեի* անցկացման փոփոխություններ նախաձեռնելու իրավունք

Նման նախաձեռնության իրավունք ունեն ԱԺ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն 1/4-ը, Կառավարությունը կամ ընտրական իրավունք ունեցող **150000** քաղաքացի /ընթացակարգը՝ ստորև/:

Ովքե՞ր ունեն Սահմանադրական փոփոխությունների հարցով հանրաքվեի անցկացում նախաձեռնելու իրավունք

Որպես նախաձեռնող սուբյեկտներ կարող են հանդես գալ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն 1/3-ը, Կառավարութ-

18 Սահմանադրության 146-րդ հոդված

19 Սահմանադրության 149-րդ հոդված

20 Սահմանադրության 155-րդ հոդված

21 Սահմանադրության 200-րդ հոդվածի 4-րդ մաս

յունը կամ ընտրական իրավունք ունեցող **200 000** քաղաքացի:

Ինչպե՞ս է Սահմանադրական փոփոխությունների նախագիծն ընդունվում խորհրդարանում

Ազգային ժողովը նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ որոշումն ընդունում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով: Եթե նախագիծն ընդունվում է, ապա այն պարտադիր կերպով դրվում է հանրաքվեի:

Եթե Ազգային ժողովում Սահմնադրության փոփոխության նախագիծը չի ստանում պատգամավորների ընդհանուր թվի 2/3-ի աջակցությունը, ապա այն պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն 3/5-ով ընդունված որոշմամբ կարող է դրվել հանրաքվեի:

Ինչպե՞ս է ներկայացվում Սահմանադրական փոփոխությունների նախագիծը պատգամավորների կամ Կառավարության կողմից

Սահմանադրության փոփոխությունների նախագիծն Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացվում Ազգային ժողովի նախագահին ուղղված պաշտոնական գրությամբ՝ Աշխատակազմի միջոցով: Պաշտոնական գրությունում նշվում են՝

- Սահմանադրության փոփոխությունների նախագծի անվանումը և շրջանառության մեջ դնելու հիմքերը՝ Սահմանադրության և ԱԺ Կանոնակարգի համապատասխան նորմերին կատարված հղումներով,
- հիմնական զեկուցողի անունը, ազգանունը,

- գրությանը կամ ստորագրաթերթին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

Գրությանը կից ներկայացվում են՝

- Սահմանադրության փոփոխությունների նախագիծը,
- Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ Ազգային ժողովի որոշման նախագիծը՝ ԱԺ Կանոնակարգով նախատեսված դեպքում,
- Սահմանադրության փոփոխությանը վերաբերող հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը,
- Սահմանադրության փոփոխությունների նախագծի հիմնավորումը, որտեղ նշվում են առկա խնդիրները, առաջարկվող կարգավորումները և ակնկալվող արդյունքները, ինչպես նաեւ հեղինակի հայեցողությամբ՝ նախագիծը մշակողների անունները, դրանց մշակման համար հիմք հանդիսացած հայեցակարգերի, իրավական ակտերի կամ այլ նյութերի վերաբերյալ տեղեկություններ,
- տեղեկանք, որտեղ տեսանելի ձևով՝ ջնջված կամ լրացված ներկայացվում են Սահմանադրության հոդվածներում առաջարկվող բոլոր փոփոխությունները:

Ինչպե՞ս է ներկայացվում Սահմանադրական փոփոխությունների նախագիծը Քաղաքացիական նախաձեռնությամբ

Քաղաքացիական նախաձեռնությունը նախ պետք է գրանցվի Կենտրոնական ընտրական հանձնաժողովում: Այնուհետև պետք է կազմի պաշտոնական գրություն՝ ուղղված ԱԺ նախագահին՝ ըստ վերը նշված օրինակի: ՔՆ նույնպես պետք է ԱԺ

ներկայացնի վերը նշված փաստաթղթերը, և դրանց կից՝ ԿԸՀ նիստի արձանագրության քաղվածքը, որտեղ նշվում են քաղաքացիական նախաձեռնության գրանցման տվյալները և լիազոր ներկայացուցչի անունը, ազգանունը:

Ինչ ընթացք կարող է ստանալ Քաղաքացիական նախաձեռնությունը

Եթե նախաձեռնության վերաբերյալ պաշտոնական գրությունը **համապատասխանում է** սահմանված պահանջներին, ապա գրությունը ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, Ազգային ժողովի նախագահը նշանակում է գլխադասային հանձնաժողով և Սահմանադրության փոփոխությունների նախագիծը դնում է շրջանառության մեջ:

Եթե այն սահմանված պահանջներին **չի համապատասխանում** և 3 աշխատանքային օրվա ընթացքում դրանց չի համապատասխանեցվում, ապա Ազգային ժողովի նախագահը գրությունը և դրան կից ներկայացված փաստաթղթերը վերադարձնում է նախաձեռնության հեղինակին՝ նշելով պատճառների մասին:

Ինչպե՞ս է ԱԺ քննարկում Սահմանադրության փոփոխությունների նախագիծը

Սահմանադրության փոփոխությունների նախագիծն Ազգային ժողովում քննարկվում է 2 ընթերցմամբ՝ օրենքների նախագծերի քննարկման համար սահմանված կարգով:

Մինչև Սահմանադրության փոփոխությունների նախագիծը 2-րդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունելը քվեարկութ-

յան է դրվում Սահմանադրության փոփոխությանը վերաբերող հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը: Եթե որոշումն ընդունվում է, ապա Ազգային ժողովի նախագահը, 2 աշխատանքային օրվա ընթացքում այդ որոշումը՝ Սահմանադրության փոփոխությունների նախագծի հետ միասին (2-րդ ընթերցմամբ քննարկված), ստորագրում և ուղարկում է Սահմանադրական դատարան: Հարցի քննարկումն ընդհատվում է՝ մինչև Սահմանադրական դատարանի որոշումը ստանալը:

Ի՞նչ կարող է կատարվել Սահմանադրական դատարանում

Եթե Սահմանադրական դատարանը Սահմանադրության փոփոխությունների նախագիծը ճանաչում է Սահմանադրությանը հակասող, ապա նախագիծը շրջանառությունից հանվում է:

Եթե ՍԴ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը ճանաչում է Սահմանադրությանը համապատասխանող, ապա նրա որոշումը ստանալուց հետո հարցի քվեարկությունն անցկացվում է Ազգային ժողովի առաջիկա հերթական նիստերում:

Ինչպե՞ս են ընթանում քվեարկությունները հաստատման դեպքում

1) Փոփոխությունները **հանրաքվեով կատարելու դեպքում** քվեարկության է դրվում ԱԺ որոշման նախագիծ՝ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու մասին, որը պետք է ընդունվի պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով.

2) **Առանց հանրաքվեի փոփոխությունների** դեպքում քվեարկության է դրվում բուն Սահմանադրության փոփոխությունների նախագիծը, որն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների **առնվազն 2/3-ով:**

Եթե Սահմանադրության փոփոխությունների նախագիծը չի ընդունվում, ապա մինչև 20 րոպե տևողությամբ ելույթով կարող է հանդես գալ հիմնական զեկուցողը՝ ներկայացնելով նախագիծը հանրաքվեի դնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ: Հիմնական զեկուցողի ելույթից հետո մինչև 10-ական րոպե տևողությամբ ելույթներով կարող են հանդես գալ խմբակցությունների ներկայացուցիչները, որից հետո որոշման նախագիծը դրվում է քվեարկության: Որոշումն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն 3/5-ով: Եթե որոշումը չի ընդունվում, ապա նախագիծը շրջանառությունից հանվում է:

Ո՞րն է գործընթացի եզրափակիչ փուլը

Ազգային ժողովի նախագահը ԱԺ որոշումը՝ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը **հանրաքվեի** դնելու վերաբերյալ, համապատասխան նախագծի հետ 1 շաբաթվա ընթացքում ուղարկում է Հանրապետության նախագահին, որը դրանք ստանալուց հետո՝ 3-օրյա ժամկետում, **նշանակում է հանրաքվե**:

Իսկ այն դեպքում, եթե Սահմանադրության համապատասխան փոփոխությունների նախագիծն ընդունվել է ԱԺ կողմից, մեկ շաբաթվա ընթացքում ԱԺ նախագահն այն ուղարկում է Հանրապետության նախագահին, որն էլ ստանալուց հետո՝ 21-օրյա ժամկետում, ստորագրում և հրապարակում է այն:

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԻՆՉՊԵՍ ՆԱԽԱՁԵՌՆԵԼ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիական նախաձեռնության միջոցով

Տպագրվել է «Թայմ թու պրինտ» տպարանում
Չափը՝ 60*80 1/16: Ծավալը՝ 0,75 մամուլ:
Թուղթը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 500 օրինակ: